Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ու Մ

Հարգելի Հայտատուներ,

Ի պատասխան № TUR-03 «Գորիս համայնքի ժառանգության հանգույցի վերականգնում» մրցույթի վերաբերյալ 13.01.2020թ. ժամը 17:30 և 14.01.2020թ. ժամը 09:38 procurement@atdf.am էլ.փոստին ստացված հարցումները ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումները.

Հարց 1՝ «Արդյոք կարող է մասնակցել TUR-03 մրցութային գործընթացի նույնականացման համարով, Գորիս քաղաքի մշակութային ժառանգության վերականգնում անվանումով ծրագրի Լոտ 1 մրցույթին: Այնտեղ կա պահանջ վերջին երեք տարիներից որևէ մեկում կատարած նմանատիպ աշխատանքների կատարման պահանջ: 2016թ պայմանագիրը կդիտարկվի պահանջին բավարարող ժամանակահատվածի մեջ թե ոչ»:

Պատասխան՝ Համաձայն վերոնշյալ մրցութային փաթեթի III բաժնի-«Գնահատման և որակավորման չափանիշներ» «Որակավորում» ենթաբաժնի «Փորձառություն» 4.2 (ա) կետի-«Հատուկ շինարարական և պայմանագրի կառավարման փորձ» պահանջի նմանատիպ աշխատանքների պայմանագրեր պետք է լինեն իրականացված վերջին հինգը տարվա ընթացքում:

Հարց 2՝ «Խնդրում եմ հնարավոր տեղեկություն տալ այն մասին, արդյոք ԼՂՀ Քաղաքաշինության կոմիտեի կողմից հաստատված և տրված «Բնակելի, հասարակական և արտադրական» լիցենզիա ունեցող ընկերությունը կարող է մասնակցել TUR-03 մրցութային գործընթացի նույնականացման համարով, Գորիս քաղաքի մշակութային ժառանգության վերականգնում անվանումով ծրագրի Լոտ 3 մրցույթին: :

Պատասխան՝ Համաձայն վերոնշյալ մրցութային փաթեթի II բաժին՝ Մրցութային տվյալների աղյուսակի Բաժին «Զ. Պայմանագրի շնորհում» ՀՄՄ 39 կետի. «որպես պայմանագրի շնորհման նախապայման, հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի կողմից հաստատված լիցենզիաներ»:
Ուստի, ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի կողմից հաստատված լիցենզիաների առկայությունը չի հանդիսանում պարտադիր պահանջ մրցույթին հայտ ներկայացնելու համար:

Հարգանքով,

Արթուր Սողոմոնյան
ՀՏԶՀ-ի գնումների բաժնի պետ

15 հունվարի 2020թ.